

ԴԵՍՊԱՆ ԱԹԱԲԵԿԵԱՆ ԺՈՄՊԼԱԹԻ ԳԵՏ ԸՆՆԱՐԿԵՑ ՆԵՐԿԱՅ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Լիբանանի մէջ Քայստանի դեսպան Վահագն Աթաբեկեան երեկ այցելեց ԸՆԿԵՐՎԱՐ յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ռալֆոն Ժումպլաթի, որուն հետ քննարկեց լիբանանեան եւ շրջանային իրադարձութիւնները, ինչպէս նաեւ՝ Քայստանի եւ Լիբանանի երկկողմանի յարաբերութիւնները:

ԿԱՆՑ «ՀԸԶՊԱԼԼԱՅԻ ԿԱՄ ԻՐԱՆՑԻ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐՈՒՆ ՊԻՏԻ ՉԱՐՏՕՐԵՆԵՔ ԿՈՒԼԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՏԵՂԱԿԱՅՈՒԻԼ»



Իսրայելի պաշտպանութեան նախարար Պեթի Կանց յայտնեց, որ Իսրայելի հարաւային շրջանին մէջ տիրող կացութիւնը փոխուած է:

Ան շեշտեց, որ ո՛չ հրթիռները եւ ո՛չ ալ փուչիկները արտօնուած են:

Անորդառնալով սուրիական հողերէն Իսրայելի դէմ արձանագրուած կրակոցներուն՝ Կանց յայտնեց, որ ինք պիտի չանդադրուայ կրակ բացող կողմերուն, «սակայն կը հաստատեն, որ Զճճալլային կամ սուրիացի ահաբեկիչներուն պիտի չարտօնենք Կոլանի սահմաններուն վրայ տեղակայուիլ», շեշտեց ան:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ԲՈՂՈՔԻ ԵՒ ՉՕՐԱԿՑԱԿԱՆ ՑՈՅՑԵՐ



Վարչապետի նշանակման խորհրդակցութիւններուն նախօրեակին, երեկ երեկոյեան, խումբ մը երիտասարդներ ցոյց մը կատարեցին վարչապետի թեկնածու Սաատ Յարիրիի Կեդրոնական Պէյրութի քնակարանին դիմաց՝ մերժելով Յարիրիին դարձեալ վարչապետ նշանակելու ճիգերը:

Յարիրիի դէմ մերժումի այս ցոյցին դիմաց Մուսթաֆայի հոսանքի համակիրներ կատարեցին հակացոյց մը, որուն ընթացքին անոնք զօրակցութիւն յայտնեցին Յարիրիի վարչապետ նշանակելու ջանքերուն:

Չոյգ ցոյցերուն մասնակից ցուցարարներուն միջեւ բաժնեցին լիբանանեան բանակն ու Ներքին ապահովութեան ուժերը:

Աւելի ուշ հրկիզուեցաւ «Յեղափոխութեան բազուկ»-ը, որ գետնորւած էր Կեդրոնական Պէյրութի մէջ: Այդ արարքը վերագրուեցաւ Մուսթաֆայի հոսանքի համակիրներուն:

Մուսթաֆայի հոսանքը իրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը նշէ, թէ հոսանքի համակիրները ոչ մէկ կապ ունին Նահատակաց իրապարակին վրայ գետնորւած «Յեղափոխութեան բազուկ»-ի հրկիզման հետ:

Այլ հաղորդագրութեամբ մը, Մուսթաֆայի հոսանքը կոչ ուղղեց իր համակիրներուն՝ յանձնառու մնալու հոսանքի կեցուածքին, որ կը մերժէ փոքր ինչ ինչ ալ ըլլան տիրող պայմանները:

Երեկոյեան ժամը 9:30-ին ցուցարարներ փակեցին «Ինկիլ»-ի կամուրջը՝ մերժելով «Յեղափոխութեան բազուկ»-ի հրկիզումը:

Յոս հարկ է աւելցնել, որ «Սաուպ Պէյրութ Ինքնընտնելը» ձայնասփիւռի կայանը խոստացաւ Կեդրոնական Պէյրութի մէջ գետնորւած «Յեղափոխութեան բազուկ»-ը վերականգնել:

Կը նախատեսուի, որ այսօր կարգ մը շրջաններու մէջ ցուցարարներ ճամբաներ փակեն՝ մերժելով Սաատ Յարիրիի վարչապետ վերանշանակումը:

Նշենք, որ Յարիրի երեկ երեկոյեան հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Դոմի կուսակցութեան երեսփոխանական պլոքի նախագահ, երեսփոխան Ասաատ Յարութիին հետ:

Յաղորդակցութեան ընթացքին ընկերակցեցաւ վարչապետի նշանակման խորհրդակցութիւնները ու նոր կառավարութիւն մը ունենալու Լիբանանի կարիքը՝ լուծելու համար երկրին դիմագրաւած տնտեսական եւ ընկերային դժուարութիւնները:

Յարութիին շեշտեց վարչապետի նշանակման խորհրդակցութիւնները կատարելու կարեւորութիւնը, ինչպէս նաեւ քաղաքական եւ ազգային կշիռը Ներկայացնող կառավարութիւն մը կազմելու անհրաժեշտութիւնը:

Յարութիին շեշտեց վարչապետի նշանակման խորհրդակցութիւնները կատարելու կարեւորութիւնը, ինչպէս նաեւ քաղաքական եւ ազգային կշիռը Ներկայացնող կառավարութիւն մը կազմելու անհրաժեշտութիւնը:

ՍԻՒՄ կողմէ, Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան Իվ լը Տըրիան կոչ ուղղեց՝ ամենէն արագ ժամանակամիջոցին կազմելու նոր կառավարութիւն մը՝ ընդգծելով, թէ կառավարութեան կազմութեան ուղղացումը պատճառաւ պիտի դառնայ, որ նաևը աւելի եւս ընկերմի:

ՂԱՏԱՊԱՐՏԵԼՈՎ ԹՈՒՐԵ-ԱԶՂՈՒԾՅԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՅԱՅ ԲՈՒՆԱՐԱՐՆԵՐԸ

ԱՆԹՈՒՆ ՓԱՏՕ. «ԵՐՏՈՂԱՆ ՈՃՐԱԳՈՐԾ Ե ՄԱՐԿՎՈՒԹԵԱՆ ԴԵՍ»

Լիբանանեան խորհրդարանի անդամ երեսփոխան Անթուն Փատ, դատաւարտելով հայ ժողովուրդին դէմ գործադրուող թուրք-ազրպէճանական բռնարարները, արաբերէն լիբանանեան խօսակցական ռոճով հետեւեալ գրառումը արձանագրած է Դիմատետրի իր էջին վրայ.

«Թուրքիա կը զօրակցի Ազրպէճանին» ընդդէմ Քայստանի, իսկ եւրոպական շահերը, դժբախտաբար, կը խաչածեն ու կը համընկնին թրքական ախորժակներուն: Իսկ հայ խիզախ ժողովուրդը կը մնայ գոհը իրեն դէմ կիրարկուող յարաճուն բռնարարներու՝ զինք իր արմատներէն ջլատելու վայրագ արշալի ծիրին մէջ, կարծեք բաւարար չեն Երտողանի նախնիներուն կողմէ հայոց դէմ գործուած սարսափներն ու ջարդերը:

«Երտողան մարդկութեան դէմ ռճագործ է»:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒԻԵՐ

- ԽՈՐՀՐԴԱԿՐԱՆԻ նախագահ Լեպիլի Պըրրի երեկ Այն Յիլեի մէջ ընդունեց Լիբանանի մէջ Ռուսիոյ նորանշանակ դեսպան Ալեքսանտր Ռոտացովը: Արարողակարգային այս հանդիպումին ընթացքին քննարկուեցան ընդհանուր իրադարձութիւններն ու երկկողմանի յարաբերութիւնները:
- ԱԶԳԱՅԻՒ ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան ժրպարան Պասիլ ընդունեց Լիբանանի մէջ Սիացեալ Լահանկերու դեսպան Տորթօ Շիաս:
- ՌԺՄԻԻԻԻԻ եւ ջուրի հարցերու նախարարութեան իրապարակած վառելանիւթի նոր սակացոյցին համաձայն, 98 եւ 95 օջախ պէտքի կ'ընեն սակը նուազած է 700 լ. ոսկիով, իսկ մագութիւնը՝ 200 լ. ոսկիով:
- ՆԵՐՔԻՆ գործոց եւ քաղաքապետութեան հարցերու նախարար Մոհամետ Ֆահմի ընդունեց Մուսթաֆայի պլոքի երեսփոխան Սամի Ֆարֆաթը, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները:
- ՊԵՅՐՈՒԹԻ նահանգապետ, դատախազ Մարուան Ապպուհի որոշումով, երեկ Մար Միշայի շրջանին մէջ գրաւուեցան 93 պիլթակազի շինքեր եւ պէտքի կ'ուսուանան, որոնք ապօրինի կերպով պահուած էին պահեստանոցի մը մէջ:
- ԽՈՐՀՐԴԱԿՐԱՆԻ փոխնախագահ Էլի Ֆըրիլ յայտնեց, որ նախկին վարչապետ Սաատ Յարիրիի վարչապետ վերանշանակումը ցոյց կու տայ, թէ երկիրը բաղկացնող հիմնական շերտերը կը փափաքեն վերստին կերտել պետութիւնը:
- ԵՐԵՍՓՈՒՆԱՆ Ժամիլ Սեյիտ կոչ ուղղեց՝ վերջ տալու սահմանադրական խախտումներուն եւ երկրի քաղաքական վիճակը:
- ՅԶՕՐ հանրապետութիւն պլոքի երեսփոխան Ֆատի Մաատ յայտնեց, որ իրենց անկախութիւնը այն էր, որ հանրապետութեան նախագահը պատասխանատու պատգամ մը փոխանցէ, սակայն ան հանդէս եկաւ բողոքող տվորական քաղաքացիի մը խօսքերով:
- ՅԶՕՐ Լիբանան համախմբումի պլոքի երեսփոխան Յիքմաթ Շիպ յայտնեց, որ վարչապետ Սաատ Յարիրիի վարչապետութիւնը ու խոստումները կը մնան անփոփոխ. ան հանրապետութեան նախագահ զօր. Միշէլ Անունէն պահանջեց յետաձգել վարչապետի նշանակումը՝ յանդէս գալով խորհրդակցութիւններ կատարելու նպատակով:
- ՅԶՕՐ հանրապետութիւն պլոքի երեսփոխան Ետի Ապի Լամաա յայտնեց, որ իրենք կը մերժեն լիբանանցիները խաբել՝ քաղաքական-մասնագիտական կառավարութիւն մը կազմելու խոստումներով:
- ՍՈՒՍՁԵՊՈՒԿ Կլոքի երեսփոխան Ռուա Թապը յայտնեց, որ Չըպալլա հիմնական պատճառն է Լիբանանի դէմ հաստատուած տնտեսական շրջափակման եւ Լիբանանի մեկուսացման:
- ՏԱՐ Ֆաթուա յայտարարեց, որ Մոհամետ մարգարէի ծննդեան տօնը կը զուգարհիպ յառաջիկայ հիւնվաքթի, 29 հոկտեմբեր 2020-ին: Այս առիթով հանրապետութեան միւֆթի շէյխ Ապտէլ Լաթիֆ Տըրիան մարդեց, որ Լիբանանի մէջ ապահովութիւնն է խաղաղութիւն հաստատուելը:
- «ԺՈՒՅԻՆՈՒՐԻՒՄ» օրաթերթին համաձայն, հոկտեմբերի աւարտին Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերգեյ Լաւրովի Լիբանան կատարելիք այցելութիւնը առկայախառն է:

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՒՏԻՆ

- Յրայր Սողոմոնեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի՝
- Տեր եւ տիկին Սեպուհ Մանճիկեան (Արաբական Միացեալ Եմիրութիւններ) 500\$
- «Փէյփալ» ծրագրի միջոցով՝
- Վասիլ եւ Տիմիթի Պոճի մահուան առիթով՝
- Բիւրակ Գոյումճեան (Ֆրանսա) 100\$

ԱՐՅԱՆ ՖՈՒՏՍ

«ԳՈՅԱՄԱՐՏԸ ՅԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ»

ԺՈՂՈՎՐԳԱՅԻՆ ՀՆԵԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

●Կարէն Խիտապետեանի մահուան առիթով՝	
Սերո եւ Մարո Քերթեշեան	200.000 լ.ն.
Պերճ եւ Մերթի Քերթեշեան	200.000 լ.ն.
Շանթ եւ Թալին Աղամբեան	200.000 լ.ն.

ԲԱՆՏԱԲՈՐՈՒԾ

Տեր եւ տիկին Շանթ եւ Յովն Պաղտիկեան բախտաւորութեան առջինեկ մանչ գաւալով մը

ՉԱՐԵՀ

21 հոկտեմբեր 2020, Պէյրութ

«ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ...»

Շարունակում U. Էջև

բաժնեմ անոնց դժբախտութիւնն ու բարկութիւնը, սակայն իրականութեան մէջ իմ պարտականութիւնն է յիշեցնել, որ տասնեակ տարիներէ Լիբանանին իշխող պատասխանատուները կը շարունակէին իրենց ընթացքը եւ կը բարձրացնէին ինչեղ կարգախօսները, որոնք իրականութեան մէջ զուլցացման խոստումներ եղած են եւ լիբանանցիներուն ներկային ու ապագային համար տեսակարար նուաճումներու չեն վերածուած», հաստատեց ան:

Նախագահ Անուն նկատել տուաւ, թէ բարեկարգումը կը մնայ կարգախօս մը, որ կը կրկնուի քաղաքական անձնաւորութիւններուն կողմէ, որոնք, սակայն, այդ կարգախօսին հակառակ ուղղութեամբ կը գործեն:

«Անոնք բարեկարգումի կարգախօսը կը կրկնեն, սակայն բարեկարգումի ոչ մէկ օգտակար քայլի կը դիմեն, այլեւ՝ կ'ապահովեն իրենց անձնական եւ իշխանական շահերը՝ նուիրումով եւ արիստոտավարութեամբ: Այս պատճառով Լիբանանի մէջ փտածութիւնը վերածուած է հաստատութեան անոնք որոնցը կազմակերպուած արարքի մը, որ իր արմատները նետած է նաեւ վարչական բաժանմունքներուն մէջ: Երբ տակաւին Ֆրանսա կը գտնուի, Լիբանանի մէջ բարեկարգումի մասին կը խօսէին, սակայն վերադառնալէս ետք ոչ մէկ բարեկարգում չօժակեցին, այդ պատճառով ալ ձեռնարկեցին փոփոխութիւն եւ բարեկարգում ծրագրին՝ հայրենիքը անձնական եւ իշխանական շահերէ փրկելու նպատակով», ըսաւ ան:

Նախագահ Անուն նշեց, որ երբ ինք փոփոխութիւն եւ բարեկարգում ծրագրին ձեռնարկած է, անկէ տուժածները իրեն դէմ պատուէշներ բարձրացուցած են, «իսկ լիբանանեան մամուլին էջերը առկա են՝ փաստելու համար այն արշաւը, որ ինծի դէմ մղուեցաւ՝ արգիլելու համար որեւէ բարեկարգում գործադրելու քայլ, այն պատճառով, որ անհիկա պարզապէս իմ անձնական համոզումներս բխած էր», նկատել տուաւ ան:

Նախագահ Անուն նշեց, որ իր իշխանութեան ակիզը ամեն ջանք ի գործ դրած է սկսելու համար լիբանանեան ջուրերուն մէջ նաւթի եւ բնական կազի պեղումներու պաշտօնական աշխատանքներուն, որ-

պէսզի կարելի ըլլայ երկրին բնական հարստութիւններուն շնորհիւ փրկել տնտեսական կացութիւնը, «սակայն այդ մասին ցարդ կասածներ կը տիրեն, եւ պետական մարդիկ մէջ գործող կարգ մը պատասխանատուներու սփռած յռտեստութեամբ կը վարուին այդ իրականութեան հետ», ըսաւ ան:

Նախագահ Անուն հարց տուաւ, որ ո՛ր է 47 կէտերէ բաղկացած բարեկարգումի այն ծրագիրը, զոր նախագահական նախաձեռնութեան մէջ ինք ներկայացուցած է քաղաքական կուսակցութիւններուն եւ երեսփոխանական պլոքներուն: «Ինչո՞ր պետք է պատասխանատուութենէ փախուտ տալ, ինչո՞ր բարեկարգումի ծրագիրներու գործադրութիւնը առկախ պահել: Ո՛ր են այն օրինակները, որոնք իրացուած չունենալու Լիբանանի վերադարձուիլը կը պահանջեն: Ո՛ր է դատական հաշուեցնութեան պահանջը: Ո՛ր է պետական գումարը մսխելու հետաքննութիւնն ու հաշուեփակ կատարելու ծրագիրը», հարց տուաւ նախագահ Անուն:

Ան նաեւ հարցուց Պէյրութի նահանգապետի պայթումէն ետք Լիբանանի յատկացուելիք փրկութեան նախաձեռնութեան մասին, որուն նպատակն է մայրաքաղաք Պէյրութը վերակառուցել: «Ո՛ր են Ֆրանսական տնտեսական եւ ելեւտական օժանդակութեան ծրագիրները: Միջազգային դրամական ֆոնտին հետ քանակցութիւնները ի՞նչ վիճակ կը պարգեն: Իսկ Կեդրոնական դրամատան մասին կառավարութեան վաւերացուցած դատական հաշուեցնութեան որոշումը ինչո՞ր չի գործադրուի: Ո՛վ է անոր գործադրութիւնը արգելակողը եւ անոր ձախողութեան համար խոսանաւումներու ձեռնարկողը», հարց տուաւ նախագահ Անուն:

Յանրապետութեան նախագահը շեշտեց, որ դատական հաշուեցնութեան իմաստով ռեւէ պատասխանատուի լուծութիւն կը նշանակէ՝ մսխումին եւ փտածութեան մեղակցութիւն՝ աւելցնելով, որ այդ հաշուեցնութիւնը կատարուելու պարագային փտածները հեռացնելու իմաստով կարելի է նկատել, որ լուրջ քայլի դիմած են:

Իր խօսքը ուղղելով երեսփոխաններուն՝ նախագահ Անուն շեշտեց, որ ժողովուրդին անունով անոնք պատասխանատու են հաշուեցնութեան կանչելու փտածները եւ հսկելու պետական աշխատանքին: Ան կոչ ուղղեց խորհրդարանի բոլոր անդամներուն՝ խիղճով ու ազգային գիտակցութեամբ գործելու՝ իրենց հայրենիքին եւ ժողովուրդին նկատմամբ:

«Իմ խօսքը ըսելէ ետք պիտի չհեռանաւ, այլ պիտի մնամ եւ պիտի շարունակեմ իշխանութիւնս՝ տէր կանգնելով իմ երդումիս: Պիտի շարունակեմ վարչապետի նշանակման եւ կառավարութեան կազմութեան առումով պատասխանատուութիւններ ստանձնել, ինչպէս նաեւ պայքարիլ բոլոր անոնց դէմ, որոնք արգելք կը հանդիսանան բարեկարգումի գործադրութեան եւ պետականաշինութեան առաքելութեան»:

Մամլոյ ատուկային ընթացքին իր խօսքը արտասանելէ ետք, նախագահ Անուն յայտնեց, որ նախկին վարչապետ Սաատ Յարիրիի եւ Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան ժրպարան Պասիլի միացեալ բարեկամներու կողմէ տարբեր փորձեր կատարուած են անոնց միջեւ հանդիպում մը կազմակերպելու, սակայն այդ փորձերը անյաջող դուրս եկած են, «իսկ ես իբրեւ իրաւարար պիտի չմիջամտեմ այս հարցին», ըսաւ ան:

ԱԿՆՄԿ

ՀԱՅ-ԹՈՒՐԹԵՒԱԶԵՐԻ ՏԱԳՆԱՊԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

Պաշտօնական աղբիւրներ անուղղակիօրէն հաստատեցին մամուլ այն լուրերը, թէ 23 հոկտեմբերին, Հայաստանի եւ Ազրայեյանի արտաքին գործոց նախարարները Ռաշինկայի իրաւիւրում են հանդիպումներ ունենալու համար ամերիկացի իրենց պաշտօնակիցին հետ՝ Արցախի տագնապին խաղաղ լուծման ուղին վերականգնելու նպատակով: Հուզահեռաքար, Հայաստանի վարչապետն ու Ազրայեյանի նախագահը Մոսկուա իրաւիւրում են, նոյն նպատակով հանդիպում ունենալու համար Ռուսիոյ նախագահին հետ: Մինչ այդ, Հայաստանի արտաքին գործոց նախարարը «արագ» այցելութիւն մը տուած է Մոսկուա: Ռուսիա եւ Միացեալ Նահանգներ Արցախի հարցին խաղաղ լուծումը հետապնդող՝ Մինսքի խմբակին համանախագահներն են:

Այս տեղեկութեանց զուգահեռ ու անոնցմէ առաջ իսկ, վերջին օրերուն «արագաշարժ» հարդորակցութիւններ տեղի ունեցան Մինսքի խմբակի երրորդ համանախագահին՝ Ֆրանսայի նախագահին եւ Հայաստանի ու Ազրայեյանի իշխանութեանց վարիչներուն միջեւ: Նոյն ստեղծարարի վրայ նուազներ հնչեցին ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդէն, եւրոպական եւ միջին արեւելեան շարք մը երկիրներէ: Ռազմական գործողութիւնները անյապաղ վերջ տալու եւ լուծումը խաղաղ բանակցութիւններու ճամբով հետապնդելու կոչերը բոլորին հասարակ յայտարարը հանդիսացան:

Դիւանագիտական այս վազքին դիմաց, Հայաստանի նախագահն ու վարչապետը բազմաթիւ մամուլի ասուլիսներ տուին ընդարձակ լսարաններ ունեցող լրատու աղբիւրներու ներկայացուցիչներու հետ, բացատրելու իրականութիւնները, ի շարք որոնց, ցոյց տալու, թէ Ց օրուան մէջ երկու անգամ իրադարձար յայտարարեցաւ, եւ սակայն թուրք-ազերիական կողմը ոտնակոխեց իր իսկ տուած խոստումը, յետոյ նաեւ ստապատիր տեղեկութիւններով աշխարհին ներկայացաւ իբր թէ գոհի ցնցոտիներով, անյոյս կերպով աշխարհը համոզելով՝ թէ հայկական կողմն է իրադարձարը խախտողը: Սուտին պղծ կարծ կ'ըլլայ, թէ անշուշտ այդ պղծ բռնելու տրամադիր արդարադատներ ըլլան:

... Հայկական բանակը արդարութիւնը կը կենսագործէ իր սեփական ձեռքերով, ի զին թանկագին կենսերու. սուղ կը վճարենք նաեւ քաղաքներու ու գիւղերու աւերման հետեւանքով:

Այս խորհրդակցութեամբ է, որ կը պատրաստուին Ռաշինկայի ու Մոսկուայի բանակցութեանց սեղանները: Խաղաղարար գլխաւոր կողմերը, ինչպէս նաեւ ՄԱԿ-ն ու ամբողջ աշխարհը իրազէն են ճըշմարտութիւններուն, որոնք առանց տերէրի մը ծածկոյթին՝ ամենայն մեղիութեամբ տարածուած են ռազմաճակատներէ մինչեւ ռմբակոծուած հայկական աւաններ, մինչեւ քաղաքական-դիւանագիտական թուկիսներ, ցուցափեղկեր: Հայութեան, ո՞րք հայութեան արդար պահանջն ու անկախութիւնն է, որ մեր իշխանութեան ներկայացուցիչները, Հայաստանի, Արցախի եւ աշխարհագրիւմ հայութեան միակամ գորակցութիւնը վայելող իշխանութիւնները այս բանակցութեանց ներկայանան ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ իրականացնելու եւ ինչ ու ժամանակակից սխալներ սրբագրուած տեսելու կամքով, վճարակաւութեամբ:

Հայութեան կամքն ու իրաւունքները կը հիմնուին շարք մը անվիճելի սկզբունքներու վրայ, որոնք պէտք է ուղեցոյց-մեկնակէտ ծառայեն այս բանակցութիւններուն: Թեմէք քանի մը հիմնական կէտեր.

Ա.- Արցախը Ո՛Չ ՄԵՎ ԱՅԵՆ պատկանած է Ազրայեյանին, հետեւաբար հայկական այս հողամասը «Ազրայեյանի կազմին վերադարձնելու» հարց չի կրնար ըլլալ. նման մեկնակէտ՝ կը նշանակէ ի սկզբանէ ապահովել... բանակցութեան ճախողութիւնը:

Բ.- Եթէ իսոսք պիտի ըլլայ «փոխադարձ զիջում»-ի մասին, հայկական կողմին համար ՀՈՂԱՅԻՆ ՀԻՋՈՒՄԻ հարց չի կրնար ըլլալ: Ընդհանրապէս, պէտք է ամենայն վճարակաւութեամբ սեղանի վրայ դնել Ըահուլմետն-Գետաշէն շրջանի վերադարձը՝ Արցախին, առանց մոռնալու Նախիջեւանին՝ Հայաստանի վերադարձի պահանջը: Պէտք է կարելի ուժովութեամբ եւ հիմնաւորումով յիշեցնել, թէ Արցախն ու Նախիջեւանը հայութեանն իւրուած են հակառակ մեր կամքին, ստալինեան ծախիլի հաշիւներով: Արցախցիք բազմիցս արտայայտած են Ազրայեյանէն խզուած ըլլալու եւ ստալինեան «լուծում»-ը վերջնականապէս մերժելու իրենց կամքը, իսկ Նախիջեւանի հայաբնակիւմը տեղի չէ ունեցած անոր հայ բնակիչներուն կամքով, այլ բռնութեամբ, հալածանքով եւ շրջանին դիմագիծը նեղագիծիւմը փորձելով: Ծիշող այնպէս՝ ինչպէս որ Թուրքիոյ ցեղասպան պետութիւնը անլի քան 100 տարի առաջ ըրաւ Արեւմտեան Հայաստանի ու անոր հայ բնակչութեան նկատմամբ: (Եւ ինչո՞ւ անշատել Արեւմտեան Հայաստանին մեր պահանջը՝ այսօրուան մեր իրաւունքներն...):

Գ.- 27 սեպտեմբերին պայթած նորագոյն պատերազմը ձեռակերտն է Թուրքիոյ, որ, Ազրայեյանի հետ ձեռք-ձեռքի տուած, վերըստին «տաք կրակի վրայ» դրած է Հայաստանն ու հայութիւնը բնաջնջելու իր վաղեմի ծրագիրը: Ցեղասպանութեան կրկնութիւնը կանխարգիւծելու կողքին, խաղաղարարները պարտաւոր են ընթացք տալ հայութեան արդար պահանջներուն: Չի բաւեր ըսել, թէ Ցեղասպանութիւնը «երբէք պիտի չկրկնուի», այլ գործով ցոյց տալ այս կամեցողութիւնը:

Դ.- Թուրքիա եւ Ազրայեյան առանց վարագոյրի կը կիրարկեն պետական ահաբեկչութիւն, պետական ոճիրներ: Անոնց բանակները յարձակումներ կը գործեն խաղաղ բնակիչներու եւ ոչ-զինուորական շրջաններու վրայ: Եկեղեցի, դպրոց, հիւանդանոց ռմբակոծելը պատերազմական ոճիր է: Անոնք ճակատներուն վրայ արձակած են նաեւ ահաբեկիչ եւ ոճրագործ վոհմակներ, որոնք կը զինուին եւ կը հոկականուորուին ուղղակի Թուրքիոյ կողմէ: Այս արարքները կը գործուին այն տրամաբանութեամբ եւ զսպանակումով, ինչ որ տեղի կ'ունենայ եւրոպական քաղաքներու մէջ, «փսլամ ծայրայեղականներ»-ն կողմէ իրականացող ոճիրներով:

Ե.- Թուրքիա, իբրեւ ոճրային պատերազմին ուղղակի մասնակցող կողմ, ո՞չ մէկ իրաւունք ունի խաղաղարարի-միջնորդի դեր խաղալու: Անլիւն. ՕժԹԱ-ի անոր զինակիցները պարտաւոր են սանձ դնելու անոր ծաւալապաշտ եւ ցեղասպանական ծրագիրներուն, որոնք Արցախէն առաջ կիրարկման դրուեցան այլ դրացիներու եւ հեռավոր երկիրներու մէջ: Չի բաւեր ցանկութիւն յայտնել, որ հայերն յաջողին դիմադրել յարձակումին, կամ՝ մերժել «երրորդ կողմ» միջամտութիւնը այս պատերազմին: Խաղաղարար միջնորդները՝ արդարութեան եւ մարդկային տարրական իրաւունքներու պաշտպան ըլլալ յաւանդողները պարտաւոր են ո՞չ միայն զազանազուսպի դեր խաղալ, այլ նաեւ պոկել զազանիկն ատամները: Համանախագահները այլեւս իրաւունք չունին միաձայնութեան խուսափելու:

(Ֆրանսայի նախագահը իրականութիւնները ըստ բանակային կը կոչէ իրենց անուններով): Անցեալ անլի քան 25 օրերու ճակատումները բաւարար փաստ կուտակեցին, թէ հայկական կողմը, հակառակ զինուորի եւ կիւթականի իր սահմանափակ կարողութիւններուն, կրնայ դիմադրել եւ ետ մղել բոլոր ոճրագործները, սակայն նաեւ իրաւունք ունի պահանջելու, որ մտակայ թէ հեռակայ «վաճառականները» դադարեցնեն Թուրքիոյ եւ Ազրայեյանի զինումը: Պատերազմը վար առած է բոլորին դիմակները, իսկ մէկ քանին խօսքէ անցած են գործի...:

Զ.- Անցեալ տարիներուն Թուրքիոյ սանձարձակութիւնները թողեցան անհակակշիռ, հետեւանքներուն ցանկը երկար է: Արցախի պատերազմին դադարեցումը պէտք է բարեշրջական անկիւնադարձ մը նշէ բազմաթիւ զիջումներ վրայ արհեստի տագնապներ ստեղծելու, մարդկային աղետները բազմացնելու Անգարայի վարիչներուն եւ անոնց լծակիցներուն ընթացքին մէջ: Գաղթականներու տագնապներէն մինչեւ եւրոպական քաղաքներ հարուածող ԱՐԱԲԵԿ-ՉՈՒԹԻՒՆՔ բաւարար ահազանգ հնչեցուցած է: Վաղը այիքը նոր ափեր կրնայ հասնիլ...:

Է.- Մնալով Արցախի պատերազմին շրջագիծին մէջ, հայութիւնը կը պահանջէ, որ վերջակէտը դրուի միակողմանի կամ, այսպէս կոչուած՝ «հաւասարակշռուած» մտեցումին: Ընդունելի չէ, որ նախապարձակ ոճրագործներն ու զոհը դիտուին «համազօպի» մտեցումով, պատերազմի դադարեցման, խաղաղութեան կոչերը արձակելին այնպիսի տրամաբանութեամբ մը, որ հայկական կողմը եւս իբր թէ յանցանքի կամ պատասխանատուութեան բաժին ունի պատերազմին շրջագիծը մնալ մէջ: Ինչպէս որ ոճրագործը պէտք է կոչել իր իսկական անունով, նոյնպէս ալ նախապարձակ պէտք է դնել ամբաստանելի աթոռին վրայ: Պէտք չէ մոռնալ, որ 1994-ի զինուորուէն ատիկն, մանր ու ծաւալուն բախումները, Ապրիլին ու այժմու պատերազմները մի՛շտ ալ շրջագիծը ձեռնած են թրջական կողմին, իսկ «միջակները» տարիներուն, Արցախի սահմանին վրայ հայկական կողմը թանկագին կենսերը գոհ տուած է ընդհատ ռմբակոծումներու եւ արձակագէներու: «Հաւասար աչքով դիտել»-ը ո՞չ արդարութիւն է, ո՞չ ալ խաղաղ լուծումի ճամբան կը բանայ, այլ կը վկայէ շիլ հաշիւներով շարժելու ընթացքը:

Ը.- 10 եւ 18 հոկտեմբերին, նոյնիսկ Մինսքի խմբակին ճիգերուն շնորհիւ գոյացած գոյգ հրադարձները ականահարուեցան թրջական կողմէն, նոյնիսկ Ազրայեյանը պատերազմի մէջ նետող Թուրքիոյ իրողական արգելափակումներուն իբրեւ հետեւանք: Բանակցութեան սեղանին վրայ պէտք է դրուին 27 սեպտեմբերը կանխող՝ պատերազմի պատրաստութեան ամբողջ թղթածրարը: Մենք չենք մոռցած, խաղաղարարներն ալ իրաւունք չունին յուշակրուստէ վարակուելու. փաստօրէն, Ազրայեյանն ո՞չ միայն ամիսներ շարունակ պատերազմի ընտրանքը թմբկահարեց, երկար ատենէ ի վեր հակահայ ատելութեամբ լիցքաւորած է իր ժողովուրդը, այլ նաեւ Նախիջեւանի մէջ աղաղակող կերպով միացեալ ռազմափորձ կատարեց թրջական բանակին հետ: Եւ այսօր գաղտնիք չէ, թէ նոյնիսկ Թուրքիան, ՕժԹԱ-ի դաշնակից Թուրքիան, Ռուսիոյ հետ կամուրջներ բանալու խաղը խաղացող Թուրքիան է Արցախի դէմ Ազրայեյանի պատերազմը ղեկավարողը: (Չենք անտեսել արեւելեան Միջերկրականի եւ Աֆրիկէի մէջ յելուզակային քայլերը, արաբական աշխարհը վերանուածելու ձգտումները...):


Թ.- Թուրքիա եւ Ազրայեյան մէկ անլի առիթներով փորձեցին պատերազմական գործողութիւններու դաշտը տարածել Հայաստանի վրայ. սահմանային աւաններու ռմբակոծումը, անօդաչու սանառակներու թափանցումները՝ Հայաստանի սահմաններէն ներս, ու տակաւին՝ Հայաստանի դէմ ստապատիր քարոզչական արշաւները բարիք նախատեսել չեն տար: Ի դէպ, Հայաստանն ու Արցախը միայն իրականացնել կարգ մը նկատառումներով կը դատուին առանձին միաւորներ: Այլապէս, անոնք լիարժեքօրէն միացած են իրարու, ինչպէս որ աշխարհատարած հայութիւնը միացած է Հայաստանի ու Արցախի հայութեան: Ո՞չ հայկական կողմը, ո՞չ ալ խաղաղարարները իրաւունք ունին սպասելու այն օրուան, որ թրջական ծրագրեալ արկածախնդրութիւնը անլի՝ ուժեղ կիրարկում գտնէ Հայաստանի մէջ: Մէկ կրամ կանխարգիւծում անլի՝ նախընտրելի է, քան հազար թոն խաղաղեցման ճիգ ու դարմանումի փորձ, երբ պայթումը տեղի ունեցած է:

Ժ.- Յանցարարն ու նախադրականը իր անունով կոչել է դատապարտել էք հայութեան արդար իրաւունքն է պահանջել, որ Ազրայեյանն եւ իսկականորը՝ Թուրքիա, անյապաղ եւ ամբողջական կիւթական հատուցում կատարեն՝ Արցախի մարտաքաղաքին, Շուշին եւ բոլոր միւս քաղաքներուն ու գիւղերուն կրած վնասներուն դիմաց: Սա երեւակայածին պահանջ չէ. ցեղասպանական այլ արարքներու զոհերուն կատարուած հատուցումները արդար նախընթացներ ստեղծած են, կը հիմնաւորեն հայութեան այս պահանջը:

ԺԱ.- Անկարելի է անտեսել մեր զինուորին կրած վնասները, մասնաւորաբար երիտասարդ կենսերու կորուստը, որ խորքին մէջ կը թագադրէ ոճրային ծրագիրը: Թող ո՞չ ոք ինքնիրեն իրաւունք վերապահէ հայկական կողմէն անկախելու, որ հարիւրաւոր նահատակներու կենսերով պահպանուած սահմանները վերատեսութեան ենթարկուին «փոխ-զիջում»-ի այս կամ այն տարագին պատրուակով:

Կարելի է երկարել հայկական կողմին ներկայացնելիք արդար ու անվիճելի պահանջներուն, իրաւունքներուն ցանկը: Յանուն Հայաստանի, յանուն Արցախի եւ յանուն աշխարհատարած հայութեան, միացեալ՝ հայութեան անունով բանակցող մեր ներկայացուցիչները պէտք է այս պահանջները ուժեղ կերպով հնչեցնեն բոլոր սեղաններուն շուրջ՝ միաժամանակ դնելով այն արդար պահանջը, որ շահակցական կամ զինակցական կապերը չեն կրնար, պէտք չէ իսպախեն ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ եւ ՄԱՐԿԱՅԻՆ ՏԱՐԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՔՆԵՐՈՒ, ԻՆՔՆՈՐՈՐՇԱԿԱՆ եւ այլ ճամբով ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ուղին, մասնաւոր, որ թէ՛ Մինսքի խմբակին համանախագահները, եւ թէ՛ մեծ ու փոքր երկիրներու, ժողովուրդներու վարիչները մի՛շտ ալ խօսած են այս արժեքներուն անունով, իրենք զիրենք հռչակած են անոնց դրօշակակիրը (բացի Թուրքիոյ ու Ազրայեյանի նման պետութիւններէ): Պահը հասած է, որ այդ դրօշը կտրէ խօսքի սահմանը, մարմին առնէ գործնական քայլերով, եւ սա՛՛ ո՞չ միայն Արցախի ու Հայաստանի ճակատներուն վրայ:

Մեր ներկայացուցիչները լիազօրուած պէտք է զգան խաղաղարար կողմերուն հասկցնելու, որ առանց նման տարրական եւ նուազագոյն պահանջներու իրականացման, ողջ հայութիւնը ներդրամիտ չքով պիտի չլինէ գիրքը եւ խաղաղարարները, պիտի չհանդուրժէ, որ արեան, բազում կենսերու եւ ահաւոր վնասներու գնով պաշտպանուած ճակատները, պահպանուած հողերը կորցնեն մատուցելու ձախիլի դիւանագիտութեան սեղաններուն վրայ: Արցախեան ազատամարտի բոլոր փուլերը կը վկայեն, որ ընկերակողն ու ընկերակողի մատնել փորձողը երկար չեն վայելած արեւը...

	
«ԳՈՅԱՄԱՐՏԸ ՅԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ»	
ԺՈՂՈՎՐԿԱՅԻՆ ՀՆԱԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ	
Ռոգ եւ Կարդգեւ Թաշճեան	100.000 լ.ո.
Արա Օհանեան	100.000 լ.ո.
Լուսին Օհանեան	100.000 լ.ո.
Քրիստին Օհանեան	150.000 լ.ո.
Յովսէփ Մոզեան	20.000 լ.ո.
Ալին Արապաղեան	25.000 լ.ո.
Հրայր Սիիրանեան	50.000 լ.ո.
Մարալ եւ Էլօ Շիշճեան	50.000 լ.ո.
Քրիստափոր Աճեմեան	500.000 լ.ո.
Սազօ Խաչատուրեան	20.000 լ.ո.
Անմել Մետրոպեան	20.000 լ.ո.
Ազգային մը	50.000 լ.ո.
Օննիկ Աճեմեան	100.000 լ.ո.
Օննիկ Գոյումճեան	70.000 լ.ո.
Վարուժ Կարդաբեան	30.000 լ.ո.
Ժան, Վարդիս եւ Գեորգ Վարդանեան	300.000 լ.ո.
Ժան Կարապետեան	100.000 լ.ո.
Եօժէն Պալեան	100.000 լ.ո.
Գեորգ Տէր Յակոբեան	100.000 լ.ո.
Սոնա Գալըմեան	200.000 լ.ո.
Մետրոպ Մաշտոց Ազնաւորեան	100.000 լ.ո.
Անալ Սարեան	20.000 լ.ո.
Կարօ Մոզեան	20.000 լ.ո.
Յարութ Սարեան	20.000 լ.ո.
Մուրատ Գասարճեան	100.000 լ.ո.
Յարութ Եսայեան	80.000 լ.ո.
Ռաֆֆի Եսայեան	75.000 լ.ո.
Շաքէ Մեֆերեան	75.000 լ.ո.
Օննիկ Սեֆերեան	20.000 լ.ո.
Յարութ Օտապաշեան	100.000 լ.ո.
Յակոբ Եսայեան	100.000 լ.ո.
Միշօ Սողոմոնեան	50.000 լ.ո.
Միշէ Էլ Ռափ	200.000 լ.ո.
Արշակ Տէր Խաչատուրեան	150.000 լ.ո.
Վիգէն Տէր Խաչատուրեան	150.000 լ.ո.
Գեորգ Տէր Սարգիսեան	50.000 լ.ո.
Փոքրիկներ Ալպերթ եւ Զաթրին Սարեան	50.000 լ.ո.
Ասատուր Մերտանեան	100.000 լ.ո.
Հայկազ Օհանեան	100.000 լ.ո.
Հայկ Օհանեան	100.000 լ.ո.
Ազնիւ Նալպաստեան	100.000 լ.ո.
Անի Յովսէփեան	50.000 լ.ո.
Անդրանիկ Թադեոսեան	10.000 լ.ո.
Ռոգ Սրապեան	40.000 լ.ո.
Սոնա Մարգարեան	20.000 լ.ո.
Խորէն Ժամկոչեան	25.000 լ.ո.
Ժան Կիրիլեան	100.000 լ.ո.
Փոքրիկներ Պարոյր եւ Արազ Նալպաստեան	50.000 լ.ո.
Յակոբ Տլպեան	20.000 լ.ո.
Վարուժ Ֆրուզգճեան	300.000 լ.ո.
Մանուշակ Գրիգորեան	100.000 լ.ո.
Սոնա Ազնեան	50.000 լ.ո.
Սեդա Մարտովանեան	50.000 լ.ո.
Յարութ Հաստեան	150.000 լ.ո.
Անահիտ Պաքճեան	100.000 լ.ո.
Գօգօ Միսեան	100.000 լ.ո.
Արեւազ Թաշճեան	30.000 լ.ո.
Ռազմիկ Տարագճեան	50.000 լ.ո.
Վերին Բանիկեան	100.000 լ.ո.
Ֆորդա Աւագեան	50.000 լ.ո.
Բայիկ եւ Գեորգ Տեմիրճեան	100.000 լ.ո.
ԼՕԽ-ի «Հայաշէն» մասնաճիւղ	200.000 լ.ո.
Ս. Յովհաննուր Կարապետ եկեղեցւոյ տիկնայացի միութիւն	200.000 լ.ո.
Ս. Յովհաննուր Կարապետ եկեղեցւոյ թաղականութիւն	400.000 լ.ո.
Վազգէն Զեյնեան	100.000 լ.ո.
Ազգային մը	500.000 լ.ո.
Ստեփան Յովհաննեան	100.000 լ.ո.
Նուարդ Յովհաննեան	100.000 լ.ո.
Ռիմա եւ Սաստրա Չոլաքեան	200.000 լ.ո.
Արա Փեղ	

ՆԻԿՈՒ ՓԱՇՏԻՆԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ...

Շարունակում է Էջեն

համար ընդունելի դիանագնոստիկական լուծումի», ըստ է վարչապետ Փաշինյանի:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը վստահ է, որ Ռուսիան՝ թե՛ իբրեւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահ, թե՛ իբրեւ Հայաստանի ռազմավարական դաշնակից, պիտի շարունակե ընել առաւելագոյնը՝ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ուղղութեամբ:

•Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Յարությանն 21 հոկտեմբերին գլխավորեց ընդլայնում աշխատանքային խորհրդակցութեան: Ան անդրադարձաւ ստեղծուած պատերազմական իրավիճակին եւ նշեց, որ, հաշուի առնելով թշնամիին նկրտումները, պետք է պատրաստուիլ երկարաժամկետ գործողութիւններու:

Նախագահ Յարությանի համաձայն՝ թիկունքային աշխատանքներուն մէջ պետք է ներառուին ինչպէս ենթակառուցումներու գործուն վիճակի ապահովման, սնունդի ժամանակին մատակարարման, թռչակ-աշխատավարձերու վճարման, այնպէս ալ ռազմական գործողութիւններուն իբրեւ հետեւանք ժամանակաւորապէս Հայաստանի Հանրապետութիւն տեղափոխուած Արցախի քաղաքացիներուն ընկերային խնդիրներու լուծման հարցերը: Ան հաստատեց, թէ Երեւանի մէջ պիտի ձեւաւորուի շտապ մարմին մը, որ Հայաստանի մարզերուն մէջ պիտի ունենայ աշխատանքային խումբեր: Շտապին նպատակը պիտի ըլլայ ժամանակաւոր կերպով Հայաստան տեղափոխուած բոլոր ընտանիքներուն ընկերային խնդիրներով զբաղիլ եւ անոնց առաջնահերթ խնդիրները հոգալ: Ան շեշտեց, որ, անկախ հանգամանքներէ, իրաքանչիւր արցախցի պետք է իրեն նկատմամբ զգայ կառավարութեան ամենօրեայ ուշադրութիւնը:

Անդրադառնալով ռազմական տիրուած տեղի ծուծած իրավիճակին՝ նախագահը նշեց, որ պաշտպանութեան բանակը՝ աշխարհագորի հետ միասին, կը շարունակէ դիմադրաւել թշնամիին յարձակողական գործողութիւնները՝ ամէն օր անոր պատճառելով կենդանի ուժի եւ զինամթերքի զգալի կորուստներ: «Թե՛ մեր բանակը, թե՛ ազգաբնակչութիւնը շատ լաւ կը պատկերացնեն ե՛ւ այս պատերազմի դժուարութիւնները, ե՛ւ անկախ երկարաժամկետ կտրուածքով յաղթահարելու խնդիրները: Անոնք օգտուելով՝ անգամ մը ես կը դիմեմ մայր հայրենիք գտնուող բոլոր զինապարտ արցախցիներուն օր առաջ Արցախ վերադառնալու եւ իրենց եղբայրներուն թե ու թիկունք կանգնելու կոչով: Բոլորս մեր վարքի եւ դրսեւորած պահուածքին համար պատասխան պիտի տանք նախ եւ առաջ հանրութեան», շեշտեց նախագահ Յարությանը:

Խորհրդակցութեան ընթացքին քննարկուեցան նաեւ կառավարման տարբեր օղակներու մէջ փոխգործակցուած աշխատանքներու առնչուած հարցեր:

•Տեղի ունեցաւ Հայաստանի եւ Արցախի բոլոր նախկին նախագահներու հանդիպումը: Այս մասին Դիմաւորի իր էջին վրայ գրած է Հայաստանի նախկին նախագահ Լեւոն Տեր Պետրոսեանի բանբեր Արման Մուսիխեանը:

Ան ըսաւ, որ Արցախի եւ Հայաստանի ներկայ մտահոգիք իրավիճակէն մեկնած՝ տեղի ունեցած է այլ խորհրդակցութիւն մըն ալ, որուն այս անգամ իրենց մասնակցութիւնը բերած են Հայաստանի Հանրապետութեան նախկին նախագահներ Լեւոն Տեր Պետրոսեանը, Ռոպերթ Զոյարեանը, Սերժ Սարգսեանը եւ Արցախի Հանրապետութեան նախկին նախագահներ Արկաղի Ղուկասեանը եւ Բակո Սահակեանը:

Նշեց, որ օրեր առաջ Լեւոն Տեր Պետրոսեան հանդիպում ունեցած էր Արցախի նախկին նախագահներ Արկաղի Ղուկասեանի եւ Բակո Սահակեանի հետ:

•21 հոկտեմբերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսը հանդիպում ունեցաւ Արցախի Հանրապետութեան նախկին նախագահներ Արկաղի Ղուկասեանի եւ Բակո Սահակեանի հետ:

Հանդիպումին ընթացքին անդրադարձ կատարեցաւ Արցախի Հանրապետութեան վրայ սանձազերծուած զինուորական գործողութիւններուն եւ ստեղծուած իրավիճակին:

•ՀՀ Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ Էդիսան Սաղաթէան Դիմաւորի իր էջին վրայ անդրադարձաւ Հայաստանի եւ Արցախի նախագահներու հանդիպումին: Ան գրեց.

«Ցանկացած հանդիպում, որը կարող է նպաստել ստեղծուած իրավիճակից ելքեր գտնելուն՝ մենք ողջունում ենք:

Յիշեցնեմ՝ օրեր առաջ հրապարակած 16 կուսակցութիւնների առաջարկը միտումնաւոր եր հենց սման հանդիպումների համար լաւագոյն ձեւաչափի եւ շահագրգիռ քննարկումների միջոցով իրավիճակում բեկումն մտցնելու համար անհրաժեշտ մեքանիզմի մշակմանը:

Հիմն էլ կրկնում եմ պատերազմի առաջին օրից մեր կողմից հնչող կոչը՝ իրական համախմբումը եւ ողջ հայ ժողովրդի ներուժի արդիւնաւետ օգտագործումը կենսական անհրաժեշտութիւն է»:

•21 հոկտեմբերին Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը հրապարակեց յայտարարութիւն, որուն մէջ նշեց, թէ նոյն օրը Ազգային արտաքին գործոց նախարարութիւնը հանդէս տեւած է ծանուցարանական յայտարարութեամբ, ուր փորձ կը կատարուի Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծումը մերժող Ազգային Թուրքիոյ դիրքորոշումը հրամսելու իբրեւ հայկական կողմի մտտեւոր:

ցում:

Թուրքիոյ եւ անոր կողմէ հովանաւորուող ահաբեկիչներու ուղղակի ներգրաւումով՝ Ազգային կողմէ Արցախի ժողովուրդին վրայ իրականացուող ռազմական յարձակումը ուղղուած է Արցախի բնիկ ժողովուրդի բնաջնջման եւ առաջին իսկ օրէն արձանագրուեցան միջազգային մարդասիրական իրաւունքի բազմաթիւ խախտումներ ու պատերազմական յանցագործութիւններ: Այս գործողութիւնները օրուն հրամայական կը դարձնեն Արցախի ժողովուրդի գոյութեան անվտանգութեան լիակատար ապահովումը:

Հայաստանի հետեւողականօրէն կ'աջակցի ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահող երկիրներու դեկլարներու միջնորդութեամբ 10 եւ 17 հոկտեմբերի յայտարարութիւններով համաձայնեցուած իրարադրի պայմանաւորուածութիւններու անվերապահ իրականացման:


Մայրոն կերպով հանդէս գալով տագնապի ռազմական լուծումը բացառող դիրքերէ՝ անգամ մը ես կը շեշտեց, որ Լեռնային Ղարաբաղի տագնապը կրնայ լուծուիլ բացառապէս խաղաղ միջոցներով, միջազգային լիազօրութիւն ունեցող ձեւաչափի՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահութեան շրջագիծին մէջ:

Կոչ կ'ուղղենք Ազգային Թուրքիոյ հովանաւորող «Թուրքիոյ» հրաժարելու միջազգային հանրութեան՝ կրակի դադարեցման վերահսկելի դրութեան հաստատման ուղղուած ջանքերը տապալելու գործողութիւններէ եւ մեղքը հայկական կողմին վրայ բարդելու իրենց անաւտանգ քաղաքականութեն:

•Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը իր 20 հոկտեմբեր 2020-ի թի 1708-Ն որոշումով ժամանակաւոր արգելք դրած է թրջական ծագում ունեցող վերջնական սպառման ապրանքներու ներմուծման կրպ:

Արգելքը ուժի մէջ պիտի մտնէ 31 դեկտեմբեր 2020-էն սկսեալ: Այս մասին յայտնեցին Հայաստանի փոխվարչապետ Միքայիլ Գրիգորեանի գրասենեակէն:

•Արցախի տեղեկատուական շտապը հրապարակած է Արցախի դէմ 27 սեպտեմբերէն սանձազերծած լայնածաւալ յարձակումներու եւ ռազմական գործողութիւններու իբրեւ արդիւնք Ազգային կենդանի ուժի կորուստներու մասին տուեալները՝ ըստ օրերու:



Արցախի տեղեկատուական շտապը յայտնած է նաեւ, որ 27 սեպտեմբերէն միւսէն օրս Ազգային ունեցած է կենդանի ուժի 6459 կորուստ:

•Արցախի եւ Ազգային կենդանի ուժի կորուստներու մասին տուեալները կը շարունակուին:

Այս մասին յայտնեց Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան:

Ան ըսաւ, որ հիմնականին մէջ թշնամիի փոքր խումբերը կը չեզոքացուին օճախային մարտերու մէջ:



«Ձանատա՛ւ, խօսէ՛. Թորոնթոյի մէջ հայերը լուռ ցոյց կազմակերպած են

Ձանատայի Թորոնթո քաղաքին մէջ հայերը լուռ ցոյց կազմակերպած են: Անոնք փողոցի մէջ պարանոսներու ու գետիկը կիներու, փոքրերու արիւնտ հագուստներ կախած են: Հնչած է հոգեւոր երաժշտութիւն: Ցոյցի մասնակիցները կրած են պաստառներ՝ հետեւեալ բովանդակութեամբ.

«Ժողովրդավարութիւնը յարձակումի տակ է», «Թուրքիոյ եւ Ազգային կենդանի ուժի կորուստը հազարաւոր կիներու կը զոհարարեցնէ», «Տեղիները կը մահանան», «Ճանչցէ՛ք Արցախը», «Դպրոցներ կը ճմբակոծուին», «Քոլոր ազգերը ձայնի իրաւունք ունին», «Հայաստանը խաղաղութիւն կ'ուզէ, Ազգային կողմը՝ պատերազմ, Թուրքիան՝ ցեղասպանութիւն», «Ձանատա՛ւ, խօսէ՛»:

ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ ՄԵԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ...

Շարունակում է Էջեն

Նախորդ երկու համաձայնութիւնները՝ նախաձեռնուած Ռուսիոյ եւ Ֆրանսայի կողմէ, ամբողջովին խախտեցան: Մարտերը քաղաքային հազարաւոր զոհերու պատճառ դարձած են, նոյն ատեն կան տեղեկութիւններ, որ Թուրքիան Սուրիայէն զինեալներ կը տեղափոխէ Ազգային կողմէն հայկական բնակչութեան դէմ կոտելու համար:

«Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի դէմ Ազգային Թուրքիոյ ձեռնարկած նախապարտաւոր գործողութիւնները, որոնք լիակատար աջակցութիւն կը ստանան Թուրքիոյ կողմէ, պետք է դադարեցնուին: Արտաքին գործոց նախարար Փոմփեոն պետք է յստակացնէ, որ Միացեալ Նահանգներ կ'աջակցին տագնապի խաղաղ լուծման ու պատրաստ են բանակցութիւններու վերսկսման օգնելու: Խաղաղութեան համար նախադրեալներ ապահովելու եւ արդիւնաւետ զինադադարի հաստատման համար Թուրքիոյ պէտք էրորդ կողմերը պետք է դադարեցնեն իրենց յարձակողական քայլերն ու զինուորական ներխուժումները:

«Միացեալ Նահանգներ պետք է անմիջապէս նպաստեն դարաբաղեան-ազգայնական շփման գիծին վրայ զինադադարի հաստատման ու Մինսքի խմբակի հովանի տակ կատարուող բանակցութիւններու վերականգնման», Մարքի գրած է իր հրապարակած նամակին մէջ:

Միացեալ Նահանգները ընդգծած է, թէ՛ որովհետեւ Ազգային կողմէն կը շարունակէ Լեռնային Ղարաբաղի տագնապը զինուորական ուժի անօրինական կիրարկմամբ լուծելու փորձերը, միջազգային ընտանիքը այլ ելք պիտի չունենայ, թե՛ ոչ ճանչնալով Արցախի հանրապետութեան անկախութիւնը:

«Արտաքին գործոց նախարար Փոմփեոն պետք է յստակացնէ, որ Ազատութեան աջակցման թի 907 օրէնքը լիաժողով պիտի կիրարկուի, եւ պիտի դադարեցուի Միացեալ Նահանգներու կողմէ անվտանգութեան ոլորտին մէջ Ազգային կողմէն յատկացուող աջակցութիւնը: Աւելի՛ն. արտաքին գործոց նախարար Փոմփեոն եւ նախագահ Թրամփը, որոնք սերտ կապեր ունին Թուրքիոյ նախագահ Երտողանի հետ, պետք է յստակ դարձնեն իրենց մենատիրական ընկերը, որ այս տագնապին մէջ Թուրքիոյ հետադարձ ներգրաւումը պիտի արժէ իրեն տրամադրուող զինուորական աջակցութիւնն ու Միացեալ Նահանգներու նախագահի վարչակազմին հետ ջերմ յարաբերութիւնները», շեշտած է Մերակոյտի անդամը:

ՆԱՓՈՒԽՅԱՆՍ

Միացեալ Նահանգներու քննկրտական Կրէյս Նափոլիթանօ Միացեալ Նահանգներուն կոչ ուղղած է՝ պաշտօնապէս ճանչնալու Արցախի հանրապետութեան անկախութիւնը: «Արմենիան»-ի փոխանցմամբ՝ այս մասին կը յայտնէ Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի տագնապին՝ Նափոլիթանօ նշած է, որ Արցախը չի կրնար միանալ Ազգային կողմին՝ աւելցնելով, թէ Արցախը հազարամեակներ շարունակ եղած է Հայաստանի մէկ մասը:

«Յառաջ ընթանալու ճամբան ազատութեան ճամբան է, ուստի, այսօր, ես կոչ կ'ուղղեմ՝ Միացեալ Նահանգներու կողմէ պաշտօնապէս ճանչնալու Արցախի հանրապետութեան անկախութիւնը», նշած է Նափոլիթանօ:

ՓԱՆՈՆ

Միացեալ Նահանգներու քննկրտական Ֆրենք Փալոն Միացեալ Նահանգներու ղեկավարութեան կոչ ուղղած է՝ օգտագործելու Ուաշինկթընի մէջ նախատեսուող հանդիպումը՝ Ազգային կողմէն կողմէն գործադրելու համար եւ ստիպելու, որ վերջ տայ Արցախի վրայ սանձազերծած յարձակումները:

«Միացեալ Նահանգներ կրնան առանցքային դեր խաղալ Արցախի մէջ ապրիլէն սկսած իրականացուող դադարեցնելու մէջ: Ար-

տաքին գործոց նախարար Փոմփեոն պետք է այս հանդիպումները օգտագործէ՝ Ազգային կողմէ վրայ ճնշում գործադրելու համար, որպէսզի վերջ տայ իր յարձակողական վարքագիծին: Ճնշումները պետք է ներառեն նաեւ ամերիկեան պատժամիջոցներու սպառնալիք՝ իբրեւ կանխարգելիչ միջոց անոնց մահացու արշաւի դէմ», գրած է քննկրտականը:

ՀՈՌՈՒՆԱՅԱԼ

Ներկայացուցիչներու տան անդամ Քրիստի Հոուլհաս, հաղորդագրութիւն մը հրապարակելով, յայտարարած է, որ խստօրէն կը դատապարտէ Ազգային կողմէ Լեռնային Ղարաբաղի հայութեան վրայ Թուրքիոյ կողմէ հովանաւորուած ու հրահրուած զինուորական յարձակումը:

«Միացեալ Նահանգներ աջակցած են պետք է շարունակեն աջակցիլ Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ, ժողովրդավարական եւ բանակցային լուծման: Զննկրեսի մէջ ես յորդորած եմ անվտանգութեան ոլորտի մէջ աջակցութիւն ցուցաբերել թէ՛ Հայաստանի հանրապետութեան, թէ՛ ալ Լեռնային Ղարաբաղի մէջ ապրող հայութեան: Ելելուտական այդ աջակցութիւնը աւելի քան արդիական է՝ տեսնելով բնութեան այս գործողութիւնները:

«Ես կ'ողջունեմ արտաքին գործոց նախարարութեան՝ խաղաղ լուծման ուղղութեամբ գործարող ջանքերը: Մենք պետք է արագ գործենք մարդկային կեանքերու հետազայ կորուստները կանխարգիլելու համար: Երկիրներուն կոչ կ'ուղղեմ՝ անմիջապէս պահպանելու զինադադարը», գրած է Հոուլհասը:

ՏԻՒՂԵՆ

Քննկրտական Սիւզըն Տիւզըն միացած է Թուրքիոյ աջակցութեամբ Արցախի հայութեան վրայ Ազգային կողմէն յարձակումը դատապարտող թի 1165 բանաձեւին, որ շրջանառութեան մէջ դրուած է, եւ որուն միացած է աւելի քան 100 օրէնադիր:

«Սեպտեմբեր 27-ին Ազգային, Թուրքիոյ աջակցութեամբ, Լեռնային Ղարաբաղի տագնապի տարիներու նշագոյն յարձակումը կատարած է Հայաստանի դէմ: Համաշխարհային շարք մը առաջնորդներ կրակոցը դադարեցնելու կոչ ուղղած են, ներառեալ՝ Միացեալ Նահանգներ արտաքին գործոց նախարար Մայք Փոմփեոն, սակայն երբ հրադադարի վերաբերեալ համաձայնութիւններ ձեռք բերուեցան, անմիջապէս ատոնց խախտման դեպքեր արձանագրուեցան:

«Թի 1165 բանաձեւը կը դատապարտէ Լեռնային Ղարաբաղի վրայ Ազգային կողմէն ձեռնարկած զինուորական գործողութիւնները եւ ատոնց մէջ Թուրքիոյ ներգրաւումը: Ես կը կիսեմ ձեր մտահոգիքները Լեռնային Ղարաբաղի մէջ կացութեան մաքրումին առնչութեամբ ու հաւատարմութեամբ եմ, որ Միացեալ Նահանգներ բարոյական պարտաւորութիւն ունին աշխատելու միջազգային ընտանիքին հետ այս աղետէն վստահածներուն աջակցելու:

«Բանաձեւը հաստատուած է Ներկայացուցիչներու տան արտաքին յարաբերութիւններու յանձնախումբին, որուն կողմէ պետք է հաստատուի», նշած է քննկրտականը:

Advertisement for AFHIL (Armenian Mutual Fund) featuring the text 'The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others' and listing various services like Health Insurance, Travel Insurance, GoodCare Clinic, Car Insurance, Health Clubs, Home Medical Equipment, BOB - Western Union, University and Student Fund, and «9U» Health Magazine.